ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. փետրվարի 11-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/5-6 պայմանագրին լրացում կատարելու մասին

Ք. Երևան

15 մայիսի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«Օպտշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Ա. Մակարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. փետրվարի 11-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/5-6 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Կատարողը պարտավորվում է Գնորդին լրացուցիչ մատակարարել թվով 26 (քսանվեց) հատ Եռաբաշխիչ՝ 4 տեղանոց հողանցումով, առանց լարի (այսուհետ նաև՝ Ապրանք): Սույն կետով նախատեսված Ապրանքի մեկ հատի արժեքը կազմում է 1650 (հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ըստ այդմ՝ սույն Համաձայնագրով սահմանված Ապրանքի ընդհանուր արժեքը կազմում է 42 900 (քառասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված ապրանքները Վաճառողի կողմից մատակարարվում են Գնորդին մինչև 2021 թվականի հունիսի 03-ը ներառյալ:
3. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
4. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
5. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
6. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Օպտշին» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Էրեբունի 26/15
ՀՎՀՀ՝ 00474635
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 220098531159000

Ա. Մակարյան
Տնօրեն